Արձանագրություն N 4
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կարիքների համար ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների գնման «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «14» «փետրվարի» 2018թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Մանյա Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ	Հասմիկ Մնացականյան,
	Միհրան Համբարձումյան
Հանձնաժողովի քարտուղար	Աննա Հարությունյան

1. ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու և ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ

(Մ.Մխիթարյան)

1.1 «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից փետրվարի 8-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և ներկայացվել է «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասին պահանջվող տեղեկատվությունը: Եզրակացությունը ստացվել է փետրվարի 13-ին. մասնակիցների ներկայացրած տեղեկատվությունը համարվել է իրականությանը համապատասխանող:

2. Հանձնաժողովը որոշեց՝

(Մ.Մխիթարյան)

2.1 «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2» ծածկագրով մրցույթի 1,2-րդ չափաբաժիններով հաղթող մասնակից ճանաչել <<Մ-Բի-Ռ>> ՍՊԸ-ին, 3-րդ չափաբաժնով՝ «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ին:
2.2 «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցներին ծանուցել անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով ներկայացնել պայմանագրի ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:
2.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Մ.Մխիթարյան)

3.1 «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2» ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրի կնքմանը հաջորդող օրը, ժամը՝ 11:00-ին, ՀՀ առողջապահության նախարարության (հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3) 2-րդ հարկում՝ նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մանյա Մխիթարյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Միհրան Համբարձումյան

_____ Հասմիկ Մնացականյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Աննա Հարությունյան